ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ ----------Ա.Ուզունյան

«31» օգոստոս 2023թ.

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Դասարան՝ I Ա

Դասղեկ՝ Ս. Հարությունյան

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.Այս տարի դասարանում սովորում են 22 աշակերտ, որից 11 աղջիկ և 11 տղա:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում՝

2.1. Աշակերտների ադապտացումը դպրոցական կյանքին:

2. 2. Ծանոթացնել օրվա ռեժիմին, կարգուկանոնի պահպանմանը:

2.3. Պարբերաբար հետևել աշակերտների անձնական հիգիենային,զրույցներ տանել հիգիենայի պահպանման մասին:

2.4.Ստեղծել դասարանական անկյուն՝ դասացուցակ, հերթապահության

2.5 Դասարանում ստեղծել ջերմ, ընկերական հարաբերություններ, համերաշխ կոլեկտիվ:Համագործակցել նաև ծնողների հետ:

2.6 Դաստիարակել հայրենասիրություն,աշխատասիրություն, հանդուրժողականություն, հարգանք սեփական անձի,ընկերոջ,ծնողի, ուսուցչի, մեծերի և փոքրերի նկատմամբ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն:

Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, հայոց եկեղեցիների պատմությանը: Սովորողների մեջ սերմանել սեր, հարգանք դեպի մեր ժողովրդի կրոնը՝ քրիստոնեությունը: Լսել հոգևոր երգեր, զրուցել ծեսերի, ավանդությների մասին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն:

Նպաստել աշակերտների գեղագիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Այցելություններ թանգարաններ, պատկերասրահ ,տեսարժան վայրեր (Օշական,Մատենադարան,Տառերի պուրակ):

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:

Պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշերի, (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը: Դաստիարակել հայրենասիրություն:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն :

Հետևել աշակերտների կեցվածքին ,առողջությանը, ռեժիմին,անվտանգությանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն :

Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն աշխատանքի ,աշխատատեղի, աշխատանքային գործիքների նկատմամբ:Սովորեցնել պահպանել դասասենյակի մաքրությունը,դասագրքերի խնամքը,կարևորել և գնահատել մյուսների աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն :

Կազմակերպել դասընթացներ՝ բնության բաղադրիչները ճանաչելու,բնության մեջ վարվելակերպի կանոններին ծանոթանալու ձեռք բերված գիտելիքները, գործնականում կիրառելու համար:

4. Դպրոց-ընտանիք կապը :

Ամուր պահել դպրոց-ընտանիք կապը:Հանդիպումներ կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների միջև: Ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքների մեջ:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկզբին

1.Գրանցել և լրացնել էլ. մատյանը :

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության հաստատություններում մասնակցության մասին :

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանք

1. Լրացնել էլեկտրոնային մատյանը :

2. Հետևել կարգապահությանը:

3. Հետևել հերթապահությանը դասարանում:

Ամենշաբաթյա աշխատանք

1.Ստուգել աշակերտների դասագրքերի,տետրերի խնամքը:

2.Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից:

3.Անցկացնել դասղեկական ժամեր:

4.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ:

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին:

2.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում:

4.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Գիտելիքի օր: Սեպտեմբերի 1	Սեպտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
2-րդ շաբաթ	Զրույց՝ << Դու արդեն աշակերտ ես >>	Սեպտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
3-րդ շաբաթ	Զրույց՝ << Իմ անկախ Հայաստան, ՀՀ պետական խորհրդանիշերը՝ դրոշ, հիմն, զինանշան	Սեպտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
4-րդ շաբաթ	Զրույց՝ <<Դպրոցի դերը և նշանակությունը >>	Սեպտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
5-րդ շաբաթ	Սիրելի ուսուցիչ	Հոկտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
6-րդ շաբաթ	Երևանն իմ տունն է	Հոկտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
7-րդ շաբաթ	Զրույց՝ << Փողոցային երթևեկություն>> թեմայով :	Նոյեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
8-րդ շաբաթ	Զրույց՝ << Ո՞վ է հետիոտնը>>	Նոյեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
9-րդ շաբաթ	Զրույց՝ <<Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույցը>>:	Նոյեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
10-րդ շաբաթ	Ովքե՞ր են իմ ընկերները, ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ:	Նոյեմբեր	Ս.Հարությունյան
11-րդ շաբաթ	Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում/քաղպաշտպանություն/:	Նոյեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
12-րդ շաբաթ	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր: Բնական աղետները և նրանցից պաշտպանվելը /քաղպաշտպանություն/:	Դեկտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
13-րդ շաբաթ	Ինչպե՞ս խուսափել վիրուսներից :	Դեկտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ
14-րդ շաբաթ	Ամանորյա հրաշքներ:	Դեկտեմբեր	Ս.Հարությունյան աշակերտներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Հայոց բանակի օր՝ <<Ես փոքրիկ զինվոր եմ>>:	Հունվար	Ս.Հարությունյան աշակերտներ
2-րդ շաբաթ	Զրույց՝<<Օգնենք ձմեռող թռչուններին>>:	Հունվար	Ս.Հարությունյան աշակերտներ
3-րդ շաբաթ	Զրույց՝ <<Ճիշտ սնվելու իմ տարբերակը >>:	Փետրվար	Ս.Հարությունյան աշակերտներ
4-րդ շաբաթ	Հայկական ծեսեր,ծիսակատարություններ:	Փետրվար	Ս.Հարությունյան աշակերտներ
5-րդ շաբաթ	Մեծն Թումանյանը :<<Գիրք նվիրելու օր>>	Փետրվար	Ս.Հարությունյան աշակերտներ
6-րդ շաբաթ	Մայրենի լեզվի օր:	Փետրվար	Ս.Հարությունյան աշակերտներ
7-րդ շաբաթ	Անգին մայրիկ:	Մարտ	Ս.Հարությունյան աշակերտներ
8-րդ շաբաթ	Գարու՛ն, բարով ես եկել:	Մարտ	Ս.Հարությունյան աշակերտներ
9-րդ շաբաթ	Մայրության և գեղեցկության տոն:	Ապրիլ	Ս.Հարությունյան աշակերտներ
10-րդ շաբաթ	Սուրբ Զատիկ	Ապրիլ	Ս.Հարությունյան աշակերտներ
11-րդ շաբաթ	Բնությունը և մարդը, մարդը բնության մասնիկ:	Ապրիլ	Ս.Հարությունյան աշակերտներ
12-րդ շաբաթ	Մեծ եղեռն :	Ապրիլ	Ս.Հարությունյան աշակերտներ
13-րդ շաբաթ	Աշխատավորների միջազգային օր:	Մայիս	Ս.Հարությունյան աշակերտներ
14-րդ շաբաթ	Սերն իմ տանը:	Մայիս	Ս.Հարությունյան աշակերտներ
15-րդ շաբաթ	Հայրենիքն իմ տունն է:	Մայիս	Ս.Հարությունյան աշակերտներ
16-րդ շաբաթ	Ինչպես եմ ուզում անցկացնել իմ ամառային արձակուրդները	Մայիս	Ս.Հարությունյան աշակերտներ

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում:

2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում;

3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում:

4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում:

5.Աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում:

6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում: